

**ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ**

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար- գլխավոր քարտուղար,  
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի դոկտորանտ

**ՎԱՐԴԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

Քաղաքագիտության մագիստրոս,  
ԳՄՀԸ իրավական ծրագրի ղեկավար Հայաստանում

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ  
ԺՈՂՈՎԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԽՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ  
ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ  
1995Թ. ՀՈՒԼԻՍԻ 5-Ի ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ**

Հոդվածում խոսվում է 1995թ. հուլիսի 5-ի Սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կարգավիճակի և լիազորությունների մասին, անդրադարձ է կատարվում վերահսկողության որոշ ինստիտուտների, ընդգծվում է այդ ինստիտուտների ոչ ամբողջականությունը, ցույց է տրվում նախագահ-խորհրդարան հարաբերություններում փոխադարձ զսպումների և հակակշիռների մեխանիզմների բացակայության վտանգը:

*Հիմնարաներ – Ազգային ժողովի գործառույթներ, Ազգային ժողովի իրավասություն, կիսանախագահական կառավարման ձև, խորհրդարանական կառավարման ձև, պատգամավորի կարգավիճակ, փոխադարձ զսպումների և հակակշիռների մեխանիզմ:*

1995 թվականի հուլիսի 5-ին ընդունվեց Հայաստանի պատմության մեջ չորրորդ և անկախ Հայաստանի Հանրապետության պատմության մեջ առաջին Սահմանադրությունը:

Որպես կանոն, նոր սահմանադրությունները չեն ծնվում դատարկ տեղում. դրանք հասարակական-քաղաքական, տնտեսական, պատմական տարբեր ու տարաբնույթ հանգամանքներով պայմանավորված իրավական փաստաթղթեր են, որոնք իրենց վրա կրում են այս բոլոր գործոնների ազդեցությունը:

Նոր սահմանադրությունների ընդունման անհրաժեշտությունն ի հայտ է գալիս այնպիսի հասարակական-քաղաքական բնույթի նշանակալի իրադարձություններից հետո, ինչպիսիք են հեղափոխությունները, անկախության նվաճումը, իշխանության ձևի կամ պետական կարգի փոփոխությունները, նոր պետության կազմավորումը և այլն:

Հայաստանի Հանրապետության՝ 1991 թվականի սեպտեմբերի 21-ի հանրաքվեի արդյունքներով անկախություն ձեռք բերելուց հետո Հայաստանի Հանրապետությունում առկա էին վերը նշված մի քանի գործոնները միաժամանակ:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական զարգացման պատմությունն ինքնատիպ է: Պետականությունը կորցնելով մի ժամանակահատվածում, երբ ժամանակակից իմաստով սահ-

մանադրություններն անհայտ էին՝ Հայաստանը հնարավորություն չի ունեցել ապրելու սահմանադրությունների զարգացման բոլոր փուլերը: Խորհրդային սահմանադրություններն էլ իրենց հերթին շեղված էին իրավական պետություններին բնորոշ սահմանադրությունների պրակտիկայից և չէին կարող հիմք հանդիսանալ նորանկախ պետության նոր սահմանադրության մշակման համար: Ուստի Հայաստանի Հանրապետությունը սահմանադրությունը մշակում էր՝ ըստ էության ունենալով անկախ պետականության 4-5 տարվա պատմություն, պետական իշխանության կազմակերպման նույնքան փորձ, որն էլ ընթացել էր պատերազմի, շրջափակման, հետերկրաշարժյան ժամանակահատվածում: Որքանով էր բավարար այս փորձը պետության կայուն զարգացման, արդյունավետ կառավարման, իրական իրավունքների և ազատությունների սահմանման համար՝ ցույց տվեցին հետագա տարիները:

Նոր սահմանադրության կարևորագույն խնդիրներից մեկն անշուշտ հիմնական իրավունքների և ազատությունների պատշաճ շրջանակի սահմանումն էր, ինչպես նաև այդ իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն ու իրականացումը երաշխավորող գործուն մեխանիզմների սահմանումը: Սակայն այդ իրավունքների և ազատությունների ամենամեծ սպեկտրի սահմանումը կա-

րող է ստվերվել, եթե պետական իշխանության կազմակերպումը հիմնված չլինի զսպումների և հակակշիռների արդյունավետ համակարգի վրա: Ցանկացած կառավարման ձևում զսպումների և հակակշիռների մեխանիզմում առանցքային նշանակություն ունեն պառլամենտի լիազորությունները:

Ազգային ժողովին վերապահված լիազորությունների շրջանակը, նրա տեղն ու դերը պետական մարմինների համակարգում էականորեն պայմանավորված էր այն կառավարման ձևով, որը դրվեց 1995 թվականի Սահմանադրության մեջ, այն է՝ կիսանախագահական կառավարման ձևը: Կառավարման կիսանախագահական ձևին պետություններն անցել են ինչպես հանրապետության նախագահի, այնպես էլ պառլամենտի մեծ իշխանությունը սահմանափակելու նպատակով: Ֆրանսիայի IV հանրապետությունից V-ին անցնելը պայմանավորված էր հենց պառլամենտի լիազորությունների սահմանափակման նպատակով: Ադուլֆ Կիմմելը Ֆրանսիական V-րդ հանրապետությունը հիշատակում է «որպես պառլամենտի լայնածավալ իշխանագրկման շքեղ օրինակ»<sup>2</sup>:

Արդյո՞ք «պառլամենտի լայնածավալ իշխանագրկման» երևույթն անխուսափելի պայման է կիսանախագահական կառավարման ձև ընտրած բոլոր պետությունների համար, թե՞ հնարավոր է գտնել այնպիսի կառուցակարգեր, որոնք հնարավորություն կտան կառավարման համակարգում ապահովել պառլամենտարիզմի մեծ տարրեր, ունենալ հավասարակշռված բալանս գործադիր և օրենսդիր իշխանությունների միջև: Հայաստանի Հանրապետության՝ 1995 թվականի Սահմանադրության մշակողներն իրենց առջև դրել էին հենց այդ խնդիրները:

**Ազգային ժողովի գործառույթն ու իրավասությունը**

1995 թվականի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 4-րդ գլուխը սահմանում է Ազգային ժողովի կարգավիճակը, կազմակերպման ու գործունեության հիմունքները: Ազգային ժողովը ժողովրդին ներկայացնող մարմինն է, որը միակն էր, բացի Հանրապետության Նախագահից, որը ձևավորվում էր անմիջապես ժողովրդի կողմից ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ, չորս տարով: ՀՀ Ազգային ժողովն օժտված էր անմիջական լեգիտիմացիայով:

Ազգային ժողովը միապալատ պառլամենտ էր, որը բաղկացած էր 131 պատգամավորներից:

1995 թվականի Սահմանադրությունը, ի տարբերություն 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների, չէր սահմանում Ազգային ժողովի կարգավիճակը որպես ժողովրդի ներկայացուցչական մարմին՝ առանձնացնելով վերջինիս բարձրագույն իշխանական մարմինների համակարգում, քանի որ ո՛չ կառավարությունը և ո՛չ էլ Հանրապետության Նախագահը ներկայացուցչական չեն. նրանք ներկայացնում են միայն մեծամասնությանը: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հիմնական գործառույթն ամրագրված էր 62-րդ հոդվածում, համաձայն որի՝ «Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրագործում է Ազգային ժողովը»<sup>3</sup>:

Հայաստանի Հանրապետության պատմության մեջ առաջին անգամ ամրագրվեց, պրոֆեսիոնալ պառլամենտի սկզբունքը<sup>4</sup>: Սահմանադրության 65-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորը չէր կարող զբաղեցնել պետական այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

Միջազգային պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ օրենսդիր գործունեությունը պառլամենտի թեպետ գլխավոր, սակայն ոչ միակ գործառույթն է: Սահմանադրությունը, բացի օրենսդիր գործառույթից Ազգային ժողովին էր վերապահում որոշ պետական մարմինների կազմավորման մասնակցության գործառույթը: Դրանցից այստեղ հարկ է նշել Ազգային ժողովի մարմինների ընտրությունը<sup>5</sup>, Կենտրոնական բանկի նախագահի և նրա տեղակալի նշանակումը Հանրապետության Նախագահի առաջարկով<sup>6</sup>, սահմանադրական դատարանի անդամների և սահմանադրական դատարանի կազմից՝ սահմանադրական դատարանի նախագահի ընտրությունը<sup>7</sup>: Դժվար չէ նկատել, որ այս մասնակցությունը բավականին սահմանափակ էր: Ազգային ժողովը որևէ մասնակցություն չունեւր գլխավոր դատախազի, անկախ հանձնաժողովների, դատավորների, մարդու իրավունքների պաշտպանի նշանակման հարցում: Նման լիազորությունների բացակայությունը և դրանք Հանրապետության Նախագահին վերապահելն էլ ավելի էին բարձրացնում Հանրապետության Նախագահի դերը և փոքրացնում Ազգային ժողովի դերը պետական մարմինների համակարգում: Հայաստանի Հանրապետության հետագա սահմանադրական փոփոխությունները կարելի է բնութագրել որպես պառլամենտի գործառույթների և իրավասության ընդլայնմանն ուղղված փոփոխություններ, երբ 2005 թվականին նախագահա-պառլամենտական մոդելից

www.journal.lawinstitute.am

անցում կատարվեց դեպի պառլամենտա-նախագահական մոդելի և 2015 թվականին՝ պառլամենտական կառավարման ձևի:

Ազգային ժողովի այլ լիազորությունների շարքում առանձնանում են վերահսկողական լիազորությունները, պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների տրամադրած վարկերի օգտագործման վերահսկողության լիազորությունը, միջազգային պայմանագրերի վավերացումը<sup>8</sup> և այլն:

Պառլամենտական վերահսկողության ինստիտուտների շարքում, կառավարման պառլամենտական և կիսանախագահական ձև ունեցող պետություններում առանձնանում է պառլամենտի առջև կառավարության պատասխանատվության ինստիտուտը: Սահմանադրությունը չունի դրույթ այն մասին, որ կառավարությունը քաղաքական պատասխանատվություն է կրում Ազգային ժողովի առջև, սակայն Սահմանադրության 74-րդ հոդվածի երկրորդ մասի վերլուծությունից և 84-րդ հոդվածից ուղղակիորեն բխում է այդ պատասխանատվությունը: ԱԺ-ն պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ անվստահություն է հայտնում կառավարությանը: Հարկ է նկատել, որ այս ինստիտուտի առկայությունն էական չի եղել: 1995 թվականի Սահմանադրության ընդունումից հետո Հայաստանի Հանրապետության պետական մեխանիզմն աշխատել է այն պայմաններում, երբ Հանրապետության Նախագահը գրեթե միշտ մեծամասնություն ուներ Ազգային ժողովում, որն էապես փոքրացնում էր այս ինստիտուտի կշիռը և կիրառման հնարավորությունը: Այս սահմանադրության գործելու ողջ ժամանակահատվածում քաղաքական առումով Նախագահն Ազգային ժողովում ունեցել է մեծամասնություն: Եթե այս հանգամանքին հավելում ենք նաև Սահմանադրության 55-րդ հոդվածի 3-րդ կետում ամրագրված դրույթը, համաձայն որի՝ Հանրապետության Նախագահը բացի ժամանակագրական սահմանափակումից որևէ այլ սահմանափակմամբ կաշկանդված չէ Ազգային ժողովի արձակման հարցում, ապա կառավարությանն անվստահություն հայտնելու Ազգային ժողովի լիազորության անէականությունն առավել քան ակնառու էր:

Պառլամենտական և կիսանախագահական կառավարման ձև ունեցող պետություններում պետական համակարգն արդյունավետ և հավասարակշռված է գործում, եթե այդ համակարգում առկա են պառլամենտական վերահսկողության այլ արդյունավետ մեխանիզմներ ևս: Կառավարության

նր անվստահություն հայտնելու ինստիտուտը, բավականին ծանրակշիռ լինելով, այնուամենայնիվ «ամենօրյա» օգտագործման համար այնքան էլ պիտանի չէ, թեպետ պետք է նաև ասել, որ կարող է բավականին մեծ լինել այս ինստիտուտի, այսպես ասած, կանխարգելիչ գործառույթը:

Ժամանակակից պառլամենտարիզմին հայտնի են նաև վերահսկողության հետևյալ ինստիտուտները.

- հարցապնդումները,
- կառավարությանը հարցեր ուղղելը,
- քննիչ հանձնաժողովների ձևավորումը,
- պետական բյուջեի կատարման հաշվետվությունը և այլն:

Հարցապնդումներն առաջ են բերում ընդհանուր քննարկումներ և բովանդակում են որոշակի սանկցիաներ: Կառավարությունը կամ կառավարության անդամը պետք է պատասխանի այդ հարցապնդմանը, որի արդյունքում պատգամավորները կարող են ծավալել քննարկումներ, որոնք կարող են ավարտվել կառավարությանը կամ դրա առանձին անդամին անվստահություն հայտնելով:

Ի տարբերություն հարցապնդումների՝ պատգամավորների՝ կառավարության անդամներին ուղղված հարցերի առնչությամբ քննարկումներ չեն կազմակերպվում, հետևաբար դրանց արդյունքում որևէ որոշում չի կայացվում: Հարցերի նպատակը կառավարությունից տեղեկատվություն ստանալն է և հրատապ հարցերի վրա հանրության ու կառավարության ուշադրության հրավիրումը:

Քննիչ հանձնաժողովների ինստիտուտը 1995 թվականի Սահմանադրությամբ ամրագրված չէր: Այն Սահմանադրության մեջ ամրագրվեց միայն 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով:

Քննիչ հանձնաժողովի՝ գործառույթներ իրականացնող ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու հնարավորությունը Սահմանադրությունն այնուամենայնիվ սահմանում էր: Սահմանադրության 73-րդ հոդվածի երրորդ մասում սահմանված էր, որ ժամանակավոր հանձնաժողով կարող է ստեղծվել նաև առանձին օրենքների նախագծերի նախնական քննարկման կամ որոշակի իրադարձությունների և փաստերի մասին Ազգային ժողովին եզրակացություններ, տեղեկանքներ ներկայացնելու համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման ցանկացած հանձնաժողովի «թիրախը» առաջին հերթին գործադիրը պետք է լինի, որը, ինչպես արդեն նշվեց, գրեթե միշտ մեծամասնություն ուներ Ազգային ժողովում, իսկ նման հանձնաժողովն էլ կարող էր ստեղծվել միայն Ազգային ժողովի որոշ-

մամբ, նման հանձնաժողովների ինստիտուտը որպես արդյունավետ վերահսկողական ինստիտուտ չգործեց: Հայտնի է ընդամենը նման հանձնաժողովներ ստեղծելու մեկ-երկու դեպք: Միջազգային պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ այս ինստիտուտը պառլամենտական փոքրամասնության արդյունավետ միջոց է, երբ այն ստեղծվում է ոչ թե պառլամենտի որոշմամբ, այլ փոքրամասնության նախաձեռնությամբ՝ իրավունքի ուժով:

Վերլուծելով Ազգային ժողովի վերահսկողական ինստիտուտների սպեկտրը՝ հարկ է նկատել, որ այն էականորեն սահմանափակված էր: Սահմանափակված էր կառավարությանն անվստահություն հայտնելու ինստիտուտը, բացակայում էր քննիչ հանձնաժողովների ինստիտուտը, բացակայում էր հարցապնդման ինստիտուտը: Մշտական հանձնաժողովների վերահսկողական լիազորությունները ևս բացակայում էին:

Սահմանադրությունը մի շարք դրույթներ էր պարունակում, որոնք սահմանում էին պատգամավորների սահմանադրաիրավական կարգավիճակը: Սահմանադրությունը սահմանում էր տարիքային ցենզ Ազգային ժողովի պատգամավորի համար. այն առ այսօր կազմում է քսանհինգ տարեկանը: Սահմանվում էին նաև հնգամյա նստակեցության և քաղաքացիության ցենզեր:

Համեմատաբար բարձր բնակչության ցենզի ներմուծումը և պահանջը (պատգամավորն առնվազն հինգ տարի պետք է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունենա) հանդիսանում էր Հայաստանում տեղի ունեցող սահմանադրական քննարկումների ամենավիճահարույց թեմաները: Սահմանադրական ընդլայնված հանձնաժողովում աշխատանքային խումբն առաջարկեց երկու դրույթներն էլ հանել, ինչն արթնացրեց ՀՀԸ-ի մի մասի և փոքր ռադիկալ կուսակցությունների ուժգին դիմակայությունը: Մինչդեռ Լևոն Տեր-Պետրոսյանն ու Բաբկեն Արարքյանը պատրաստ էին լայնածավալ փոխզիջումների: Վերջինս առաջարկեց սահմանել ընդամենը մեկ տարվա քաղաքացիության և նստակեցության ցենզ: Լևոն Տեր-Պետրոսյանի առաջարկը՝ սահմանափակել քաղաքացիության ցենզը երեք տարով, հավաքեց ընդամենը 13 կողմ ձայն՝: Վերջնական արդյունքում, չնայած աշխատանքային հանձնաժողովի այս դրույթները տապալելու հետագա փորձերին, հողվածը մնաց անփոփոխ:

Հաշվի առնելով հայ ժողովրդի գրեթե երկու երրորդի՝ Հայաստանի Հանրապետությունից դուրս ապրելու և նրանց ներուժը պետական կառավարման համակարգում օգտագործելու անհրաժեշտու-

թյունը՝ նման սահմանափակումները, կարծում ենք, թերևս հիմնավոր չէին: Այս սահմանափակումները մնացին նաև հետագա սահմանադրական փոփոխությունների արդյունքում: Միայն 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում նստակեցության և քաղաքացիության ցենզերը պատգամավորի համար հինգ տարուց չորսի իջեցվեցին:

Հայաստանի Հանրապետության պատմության մեջ առաջին անգամ սահմանվեց պրոֆեսիոնալ պատգամավորի ինստիտուտը: Սահմանադրության 65-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորն այլ պետական պաշտոն զբաղեցնելու, այլ վճարովի գործունեությամբ զբաղվելու իրավունք չունեք, բացառությամբ գիտական, մանկավարժական և ստեղծագործական գործունեության: Առաջին հերթին այստեղ հարկ է ընդգծել խորհրդարանական մանդատի անհամատեղելիությունը որևէ այլ կառավարական պաշտոնի հետ, ինչով առաջին հերթին նպատակ է հետապնդվում խորհրդարանական մանդատը հստակ տարանջատել կառավարական պաշտոնից: Ոչ պակաս կարևոր է նաև խորհրդարանական մանդատի անհամատեղելիությունը որևէ այլ պետական պաշտոնի հետ: Այսպիսով, Հայաստանի առաջին խորհրդարանի աշխատանքից հետևություններ էին արվել, երբ տարբեր կենտրոնական և տեղական պետական մարմինների ղեկավարների խրոնիկ բացակայությունները խանգարում էին խորհրդարանի արդյունավետ աշխատանքին: Կառավարության անդամի պաշտոնը և խորհրդարանական մանդատը խիստ տարանջատելու սկզբունքը թերևս չէր վիճարկվում և ամրագրվել էր արդեն 1991թ. նոյեմբերի 19-ի՝ Խորհրդարանի մասին օրենքում: Սահմանադրության 65-րդ հոդվածն արգելում էր խորհրդարանական մանդատի որևէ համատեղում: Այս հոդվածի դրույթների նպատակն էր, ի տարբերություն 1995թ. մարտի 27-ի՝ Սահմանադրության մասին օրենքի, ստեղծել թվով համեմատաբար փոքր, պրոֆեսիոնալ խորհրդարան, որի պատգամավորները պետք է միայն օրենսդրի բուն գործառույթ իրականացնեն: Միակ բացառությունը գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքն էր: Հետագա տարիներին պատգամավորների գործունեության հպանցիկ վերլուծությունն անգամ ցույց տվեց, որ այս նորմը թերևս պահպանվեց միայն այլ պաշտոն չզբաղեցնելու մասով և լայն ծավալներով խախտվում էր ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքի մասով:

Առաջին անգամ Սահմանադրության 66-րդ հոդվածում ամրագրվեց ազատ մանդատի սկզբուն-

քը, որը բացառում էր խորհրդային տարիներին գործող հրամայական մանդատի սկզբունքը: «Պատգամավորը կաշկանդված չէ հրամայական մանդատով և առաջնորդվում է սեփական խղճով և համոզմունքներով»: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է պատգամավորի անձեռնմխելիությունը՝ որպես պատգամավորի գործունեության կարևորագույն երաշխիքներից մեկը «Պատգամավորը չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել իր կարգավիճակից բխող գործողությունների, այդ թվում՝ Ազգային ժողովում հայտնած կարծիքի համար, եթե այն գրպարտություն կամ վիրավորանք չէ»: Հարկ է նկատել, որ այս անձեռնմխելիությունը բացարձակ չէր, և նույն հոդվածի երրորդ մասի համաձայն՝ պատգամավորը կարող էր կալանավորվել, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկվել միայն Ազգային ժողովի համաձայնությամբ:

Սահմանադրությունը կարգավորում էր Ազգային ժողովի գործունեության կարևորագույն հարաբերությունները՝ մանրամասները թողնելով Ազգային ժողովի կանոնակարգին:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը ֆրանսիական օրինակով սահմանափակում էր խորհրդարանի մշտական հանձնաժողովների թիվը վեցով<sup>11</sup>: Հոդված 73-ի 2-րդ մասում ամրագրված այս դրույթը կապված է սահմանադրական ընդլայնված հանձնաժողովի աշխատանքային խմբի հայտի հետ: Ընդ որում, աշխատանքային խումբը սկզբից հինգ մշտական հանձնաժողով էր առաջարկել<sup>12</sup>: Թեև այս դրույթը կարելի է համարել «ռացիոնալիզացված պառլամենտարիզմի» միջոց, մյուս կողմից, սակայն, կասկած չկա, որ, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների համեմատաբար փոքր թվով (131) պայմանավորված, սա այնքան զգալի միջամտություն չէ խորհրդարանի բուն իրավասություններին, որքան ֆրանսիական խորհրդարանում<sup>13</sup>: Բացի այդ, ավելի մեծաքանակ հանձնաժողովները պետք է բարձրացնեն իրենց արդյունավետությունը<sup>14</sup>: Առանձին օրենքների նախագծերի ընթացիկ մշակման համար կարող են ստեղծվել ժամանակավոր հանձնաժողովներ (հոդված 73, մաս 3):

Հաշվի առնելով Ֆրանսիայի Սահմանադրության 40-րդ հոդվածի համեմատելի կարգավորումները՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 75-րդ հոդվածի 4-րդ մասը համեմատաբար թույլ է: Համաձայն այդ հոդվածի՝ Ազգային ժողովը պետական եկամուտը նվազեցնող կամ պե-

տական ծախսերն ավելացնող օրենքների նախագծերը քննարկում է միայն կառավարության եզրակացությամբ և ընդունում պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Այս հոդվածի տառացի մեկնաբանության պարագայում, հաշվի առնելով, որ բոլոր օրենքների նախագծերն էլ որոշակի ծախսեր են առաջացնելու, թեկուզ դրանց տպագրման ծախսը, ապա կարող էր ստացվել մի վիճակ, երբ բոլոր օրենքներն ընդունվեին բացարձակ մեծամասնությամբ: 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների 109-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրվեց նույնաբովանդակ դրույթ, սակայն ծախսեր և եկամուտներ բառերից առաջ ավելացվեց «էականորեն» բառը:

Հենվելով «գոլիստական հանրապետության պառլամենտարիզմի խորհրդանշի»<sup>15</sup> «vote bloqué» վրա, ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում էր, որ կառավարությունն իրավունք ունի պահանջելու միայն իր կողմից ընդունված փոփոխություններով օրենքների նախագծերի քվեարկությունը: Ի տարբերություն ֆրանսիական Սահմանադրության 44-րդ հոդվածի 3-րդ մասի, որը կիրառելի է ինչպես կառավարության, այնպես էլ խորհրդարանի կողմից ներկայացված օրենքների նախագծերի համար<sup>16</sup>, այնուամենայնիվ հայկական Սահմանադրությունը սահմանափակում է «vote bloqué» կիրառումը միայն կառավարության կողմից ներկայացված օրենքների նախագծերով: Հոդված 75-ի 2-րդ մասը նախատեսում էր միայն «կառավարության հեղինակային իրավունք»-ը<sup>17</sup>:

«Ռացիոնալիզացված պառլամենտարիզմի» ամենահզոր զենքը՝ ֆրանսիական սահմանադրության 49-րդ հոդվածի 3-րդ մասը, օրենսդրական գործընթացում ընդգրկելիս ևս ՀՀ Սահմանադրության հեղինակները որոշեցին վստահության հարցը կապել կառավարության կողմից ներկայացված նախագծի ընդունման հետ (հոդված 75, մաս 5)<sup>18</sup>: Շատ ավելի կարևոր էր այս դրույթի ավելացումը, որը, ինչպես նույն հոդվածի 4-րդ մասի փոփոխությունը, Սահմանադրության նախագծում ընդգրկվեց վերջին պահին. (հոդված 75-ի 6-րդ մասը սահմանափակում էր այս դրույթի կիրառումը յուրաքանչյուր նստաշրջանում երկու անգամով<sup>19</sup>:

Կառավարությունն իրավունք ունի կիրառելու վերը նշված միջոցներից երկուսն էլ «vote bloqué» և հոդված 75-ի 5-րդ մասում նախատեսված դեպքում և պետական բյուջեի նախագծի քննարկման և ընդունման ժամանակ (հոդված 90): Եթե խորհրդարանը կառավարությանն անվստահություն է հայտնում, ապա նոր կառավարությունը պետք է քանօրյա ժամկետում բյուջետային հայտը ներկա-

յացնի խորհրդարանին: Բյուջեի նախագիծը քննարկվում և հաստատվում է երեսուն օրվա ընթացքում, նույն ընթացակարգով:

Ամփոփելով կարելի է ամրագրել, որ չնայած խորհրդարանի օրենսդրական սուվերենության սահմանափակումներին, հատկապես օրենսդրական գործընթացի սահմանափակումներին, կառավարության հանդեպ խորհրդարանական վերահսկողությունն առկա է, սակայն Հայաստանի Հանրապետությունում ընդունված մոդելն ուղղակիորեն հարցականի տակ էր դնում փոխադարձ զսպումների և հակակշիռների մեխանիզմները: Փոխադարձ զսպումների և հակակշիռների մեխանիզմները բացակայում են նախագահ-խորհրդարան հարաբերություններում: Եթե Հանրապետության Նախագահը կարող է միանձնյա որոշում ընդունել Ազգային ժողովի լուծարման վերաբերյալ, ապա Ազգային ժողովը որևէ կերպ չի կարող քաղաքական պատասխանատվության ենթարկել Հանրապետության Նախագահին. իմպիչմենտի ընթացակարգը

վերաբերում է միայն պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության դեպքերին (հոդված 57 մաս 1): Կառավարության պատասխանատվությունն Ազգային ժողովի առջև նույնպես բարդացված է, քանի որ Հանրապետության Նախագահը կառավարությանն անվստահություն հայտնելու դեպքում կարող է արձակել խորհրդարանը կամ կառավարության հրաժարականն ընդունելուց հետո նորից նշանակել նույն վարչապետին՝ սպառնալով խորհրդարանի լուծարմամբ:

Նման մոդելն առավել վտանգավոր էր Հայաստանի Հանրապետության համար, որը չուներ ժողովրդավարության ավանդույթներ, ուժեղ քաղաքացիական հասարակություն, չգրված արգելքներ ու սկզբունքներ:

<sup>1</sup> Տե՛ս Հ. Խաչատրյան, Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրությունը, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», Երևան 1997թ., էջ 11:

<sup>2</sup> Տե՛ս Adolf Kimmel, Die Nationalversammlung in der V. französischen Republik, (Ադոլֆ Կիմմել, Ազգային ժողովը ֆրանսիական V հանրապետությունում), Քյոլն, Բերլին, 1983թ., էջ 15:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրություն: Եր.: Մխիթար Գոշ, 1997թ.:

<sup>4</sup> Մանրամասն տե՛ս Хачатрян Г.М. Конституционный опыт, юридический аспект (О совмещении депутатского мандата).-Республика Армения, 17.03.1994г., N 48:

<sup>5</sup> Ազգային ժողովի նախագահի և նրա տեղակալների՝ հոդված 79, Ազգային ժողովի Վերահսկիչ պալատի նախագահի՝ հոդված 83, կետ 2.:

<sup>6</sup> Հոդված 83, կետ 1:

<sup>7</sup> Հոդված 83, կետ 2:

<sup>8</sup> Հոդված 81, կետ 2:

<sup>9</sup> Հոդված 84:

<sup>10</sup> Տե՛ս Սահմանադրական հանձնաժողովի նիստերի արձանագրությունը առ 20-ը հոկտեմբերի 1994 թվական, արձանագրություն N 65, էջեր 6-7:

<sup>11</sup> 2005 թվականի սահմանադրական փոփոխություններով այն դարձվեց 12: 2007 թվականից սկսած՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում գործել են հենց 12 մշտական հանձնաժողովներ:

<sup>12</sup> Սահմանադրական հանձնաժողովի նիստն առ 24-ը նոյեմբերի, 1994թ., արձանագրություն թիվ 78, էջ 6:

<sup>13</sup> Մշտական հանձնաժողովների թվի կտրուկ կրճատմամբ ֆրանսիական սահմանադրության ճարտարագետները նպատակ էին հետապնդում կանխել III և IV հանրապետություններում մշտական հանձնաժողովների զարգացումը դեպի «սովերային նախարարությունների»:

<sup>14</sup> Վ. Նազարյանը մի քանի անգամ անդրադարձել է այդ հարցին սահմանադրական հանձնաժողովի զեկույցում առ 2-ը մայիսի 1995թ., «Հայաստանի Հանրապետություն» թերթում առ 4-ը մայիսի 1995թ. և «Հայք» թերթում առ 13-ը հունիսի 1995թ.:

<sup>15</sup> Ֆրանսիացի սահմանադրական իրավունքի մասնագետ Պյեր Ավրիլի կարծիքը, մեջբ. ըստ Ադոլֆ Կիմմելի (Adolf Kimmel, Die Nationalversammlung in der V. französischen Republik) (Fn. 80), էջ 95:

<sup>16</sup> Տե՛ս Rainer Grote, Das Regierungssystem der V. französischen Republik (Fn. 61), էջ 138:

<sup>17</sup> Վ. Նազարյանն այդ մասին նշել է մի հարցազրույցում՝ «Հայք» թերթում առ 13-ը հունիսի 1995թ.:

<sup>18</sup> Չնչին տարբերությունն այն է, որ Ֆրանսիայի սահմանադրության 49-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վստահության հարցը կարող է կապվել յուրաքանչյուր տեքստի, այսինքն՝ նաև խորհրդարանի ներկայացրած օրենքների նախագծերի հետ: Եթե հայկական սահմանադիրների նմանատիպ որոշումը 75-րդ հոդվածի 2-րդ մասի դեպքում շատ մեծ գործնական նշանակություն ունի, ապա այս դեպքում տարբերությունը միայն տեսական է. դժվար կլինի պատկերացնել, որ կառավարությունն իր վստահության հարցը կկապի «օտար» օրենքի նախագծի ընդունման հետ:

<sup>19</sup> Հետաքրքրաշարժ եղանակով 1992թ. դեկտեմբերին Ֆրանսիայի Նախագահի ձևավորած Ժորժ Վեդելի գլխավորած հանձնաժողովը, որը պետք է 1958թ. սահմանադրության վերանայման առաջարկություններ մշակեր, մերժեց Ֆ. Սիտերանի՝ 1992թ. նոյեմբրի 30-ի առաջարկը, համաձայն որի՝ նրա կողմից 49-րդ հոդվածի 3-րդ մասի սխալ կիրառումը պետք է սահմանափակվեր ֆինանսական օրենքներով և օրենսդրական նախաձեռնությունների փոքր թվով՝ հիմնավորելով, որ այդ հոդվածի կիրառման ոլորտը որակական և քանակական չափանիշներով սահմանափակելով՝ կարելի է հանգեցնել վստահության հարցի մեխանիզմի “paralytic excessive”-ի: Հանձնաժողովի առաջարկը՝ կառավարության վստահության հարցը դնել միայն օրենքների նախագծերով, որոնք անհրաժեշտ են թվում կառավարական ծրագրի իրականացման համար, կարծես քանակական սահմանափակումից ավելի լավ չէ: *St’u Propositions pour une révision de la Constitution*, 15 février 1993. Comité consultatif pour la révision de la Constitution, présidé par le doyen Georges Vedel. La Documentation Française, Փարիզ 1993թ., էջեր 12, 45-46 և 61:

**Грайр Товмасын**

Руководитель - генеральный секретарь аппарата НС РА,  
кандидат юридических наук, доцент,  
докторант академии государственного управления РА

**Вардан Погосян**

Магистр политологии,  
руководитель правовой программы НМОС в Армении

#### РЕЗИЮМЕ

##### *Конституционный статус и полномочия Национального Собрания Республики Армения по Конституции 5 июля 1995г.*

В статье говорится о статусе и полномочиях Национального Собрания Республики Армения по Конституции 5 июля 1995г., обращается внимание на некоторые институты контроля, подчеркивается нецелостность этих институтов, показывается опасность отсутствия механизма взаимных сдержек и противовесов в отношениях президент-парламент.

**Ключевые слова** – функции Национального Собрания, юрисдикция Национального Собрания, полупрезидентская форма правления, парламентская форма правления, статус депутата, механизм взаимных сдержек и противовесов.

**Hrayr Tovmasyan**

The RA NA Chief of Staff - Secretary General,  
PHD in Law, Associate Professor,  
Postdoctoral Researcher of the Public Administration Academy of RA

**Vardan Poghosyan**

Master’s in political science,  
Head of the GIZ Legal Programme in Armenia

#### SUMMARY

##### *Constitutional status and powers of the National Assembly of the Republic of Armenia by the Constitution of 5th of July 1995*

The article discusses the constitutional status and powers of the National Assembly of the Republic of Armenia by the Constitution of 5th of July 1995, refers to some control institutions, emphasizes the non-completion of those institutions, shows the danger of absence of the mechanism of checks and balances in president-parliament relations.

**Keywords:** functions of the National Assembly, jurisdiction of the National Assembly, semi-presidential form of government, parliamentary form of government, status of a member of parliament, mechanism of checks and balances.